ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

ք. Երևան **«09» հուլիսի 2025 թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2025 թվականի հուլիսի 4-ի № 2-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2025 թվականի հուլիսի 9-ին, ժամը 9^{00}-ին և ավարտվել՝ ժամը 13^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյանը - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար,

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյանը - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ,

Օ. Աբրահամյանը - Հայաստանի Հանրապետության արադարադատության նախարարի տեղակալ,

Ա. Բաղդասարյանը - «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ,

Բ. Փափազյանը	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ,
Ա. Բախշյանը	- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական,
Ա. Հակոբյանը	- «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն:

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (համաձայնեցված է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ) «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածից 20 մլն. ՀՀ դրամ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելուն հավանություն տալու մասին:

Օրակարգային հարցի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
3. Օ. Աբրահամյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
4. Ա. Բաղդասարյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
5. Բ. Փափազյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
6. Ա. Բախշյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
7. Ա. Հակոբյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝
Հարց՝ 7 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 7 անդամներից 7-ը օրակարգի հարցին քվեարկել են «կողմ»:

Խորհուրդը որոշեց.

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (համաձայնեցված է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ) «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածից 20 մլն. ՀՀ դրամ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելուն:

7/10/2025

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Խորհրդի նախագահ՝ _____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն